

ՃԵՄՈՐՆՑ ԲԱՐԵԿԱՄԸ



Ատենով մարդ մ'ունէր երեք բարեկամ.
Գրամ, կին եւ իր բոլոր գործերը բարի:
Երբ մահուան դառն ու ժանտ վայրկեանը հասաւ,
վերջին բարեւ մը տալ ուզեց ամենուն:
Նըշան ցաւիս, դրամն ըսաւ այսպէս անոր,
Կը վըճարեմ ծախքը Թաղմանդ համդիսին:
— Եւ ես կու գամ՝ իբրը սիրոյս արտայայտ՝
Հետեւելու մինչ գերեզմանդ, ըսաւ կինն:
Իսկ երրորդն ալ — Մի սուր ողջոյն հրաժեշտի
վասնն զի մահն ըզմեզ բաժնել կարող չէ,
Կրնաս ատոր վստահ ըլլալ, բարեկամ....

Մարդը մեռաւ. դրամը լոկ միմ մը տըլաւ.
Կինը յուլարկ ընկերացաւ ամուսնոյն.
Իսկ բարեկամն ըստոյգ՝ տարաւ գինքն երկինք:....

ՍՔԱՐԱՎԿԻ

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ՋԱԻԼԵՆ ՍԻՒՐՄԷԼԵԱՆ. — Լոյս զուարթ (քեր-
թուածներ). Փարիզ 1924:

Մարմնող երեկորի մը յետին ծուէններ,
որ կարօտի և բուռն տենչանքի մեղամաղձ
թախիծը ծրարելով իրենց ծոցին մէջ՝
կ'երթան կը մեռնին հեռու հայրենի ա-
փեր....

« Լոյս զուարթ ». Կիրականամուտի աղօ-
տալոյս կանթնդն է արդեօք որ հիւանդա-
գին կը պլլալայ համատարած աղօթարանին
մէջ, մի միայն բաղձանքի իւղով բորբո-
քուած. սակայն մեզ հասած Լոյս զուար-
թը, երփներանգ ծաղկներով հիւսուած
Լոյսի զուարթ փունջ մ'է, կարօտի և հայ-
րենարազութեան վճիտ կաթիլները թեր-

թերուն վրայ. Մայր բնութեան անծայր
էջերուն ծաղկեկար զարդեր են, նոր՝
բայց խանդոտ գրիչէ մը յօրինուած:

Խորհրդապաշտ և նկարագրական տողեր,
գրեթէ մանկական շեշտով՝ բայց գողտրիկ
և զունագեղ պատկերներով և վառվռուն
երեակայութեան ցուրերով:

Թէպէտ յառաջաբանին մէջ խրոխտ և
աննուաճ ոգի մը կը ցուցնէ Պ. Զաւէն
Միրմէլեան քանի մը նամակներով, սա-
կայն ոտանաւորները գրեթէ հակոռոնայ
հոգի մը կը ցուցնեն, ոչ թէ սրով, այլ սիրով
կը թափառի հայրենի աւերակներու վրայ,
Երասխի կաթնածոր լուսնին տակ. « Այս-
պէս հանդարտ կու գամ ման Լուսաւորչի
Աստղին տակ » « Խաչ քարերու սո՛ւրբ
աշխարհ »: